

ԵՐԵՎԱՆ, 29 (ԱՐՄԷԼ, ՓՐԵՍ).- Սեյմովեան Տնտեսական Համագործակցութեան տնտեսական յանձնախումբի Ուրբանիոյ խորհրդարանի անդամ վարչապետ Չերնեակ յայտնեց, որ Ուրբանիա հետաքրքրուած է Իրան - Հայաստան կապտարի կառուցումով: «Մենք կը նկատենք, որ Իրանէն Ուրբանիա ամէնէն կարճ ճանապարհով կ'ապաստանի վրայով», ըսաւ ան: Նշելով, որ երկու երկիրներուն միջեւ անցնող 9 ամիսներուն ընթացքին առեւտուրին ծաւալը շատ փոքր եղած է՝ 10 միլիոն տոլար, Վ. Չերնեակ կարելի չ'ընկալեց արտածման եւ ներածման ծաւալները ընդլայնելու ուղղութեամբ որդեգրուելիք քայլերը: Այս իմաստով ան կարելի չ'ընկալեց ՍՏՀ խորհրդարանական վեհաժողովի դերակատարութիւնը, որ կարելիութիւն կը ստեղծէ օրէնսդրական հիմքերու վրայ ամրապնդելու երկկողմանի տնտեսական գործակցութիւնը:

ՆԱԽԱԿԱՅ ԶՕՐ. ԷՍԻԼ ԼԱՅՈՒՏ ԸՆԴՈՒՆԵՑ ՆԵՊԻՅ ՊԸՐՐԻՆ



Նախագահ Լառուտ եւ Պըրրի

Հանրապետութեան նախագահ զօր. էմիլ Լառուտ երէկ Պառլամենտի պալատին մէջ ընդունեց այցելութիւնը խորհրդարանի նախագահ Նեպիճ Պըրրիի, որուն հետ ըննարկեց երկրին իրավիճակն ու ընդհանուր հարցերը: Անոնք խօսեցան հարաւի զարգացումներուն եւ Իսրայէլի կողմէ լարուածութեան սաստկացումին, ինչպէս նաեւ շրջանին մէջ տիրող կացութեան մասին: Լառուտական աղբիւրներ հաղորդեցին, որ Լառուտ եւ Պըրրի նաեւ ըննարկած են վերջին օրերուն լիբանանեան բեմին վրայ քաղաքական շարժումներն ու յայտարարուած կեցուածքները:

Նախագահ Լառուտ Պըրրիի ներկայացուցած է տնտեսական վիճակը բարելաւելու ուղղութեամբ առնուող քայլերն ու անոնց յաջողութեան համար օրէնսդիր եւ գործադիր իշխանութեանց գործակցութեան կարեւորութիւնը:

Նախագահ Լառուտ երէկ ընդունեց նաեւ նախկին վարչապետ Սելիմ Հըսը, որուն հետ ըննարկեց ընդհանուր հարցերը, ապա նախկին նախարար Ֆուատ Պուլաճի հետ ըննարկեց անոր Դամասկոս եւ Պէրքէ այցելութիւնները:

Հըզպալլայի «Հաւատարմութիւն դիմադրութեան» երեսփոխանական պլոքի նախագահ Մուհամէտ Ռաատ նախագահ Լառուտի ներկայացուց երկրին ընդհանուր հարցերուն նկատմամբ պլոքի կեցուածքը:

Յոյն կաթողիկէ եպիսկոպոսներ Եուսէֆ Քալաս, Անթուան Հայէք եւ Պուլթրոս Մուսալէմ պաշտօնապէս նախագահին փոխանցեցին համայնքի սինտոնի կողմէ կրկնորոն Գ. Լահամ պատրիարքի ընտրութիւնը, նախագահը հրաւիրելով նոր պատրիարքին կիրակի օր մատուցելիք առաջին պատարագին: Նախագահ Լառուտ յորհակալութիւն յայտնեց պատուիրակութեան այցելութեան, յաջողութիւն մաղթեց նոր պատրիարքին, դրուատելով անոր ընտրութեան առիթով կատարած յայտարարութեան մէջ արժարժուած ազգային կեցուածքները:

Նախագահ Լառուտ երէկ նաեւ ընդունեց ընդհանուր դատախազ Ատնան Ատուուլը:

«ԼԻՊԵՐԱՄԻՈՆ» ԹԵՐԹԻՆ ՄԷՁ ՍՖԵՅՐ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ ՀԱՐՅԱԶՐՈՅՑԸ ԵՐԿՈՒ ԱՄԻՍ ԱՌԱՋ ԿԱՏԱՐՈՒԾ Է

Մարոնիներու Սֆէյր պատրիարքը երէկ իր այցելուներուն ըսաւ, թէ ֆրանսական «Լիպերասիոն» օրաթերթին մէջ լոյս տեսած իր հարցապարոյցը կատարուած է երկու ամիս առաջ, Սեպտեմբեր 29ին, այսինքն՝ վերջին նախաձեռնութիւններէն առաջ: Սֆէյր նաեւ ըսաւ, որ ինք ապաւինած է այս նախաձեռնութիւններուն, իրականացնելու համար Լիբանանի եւ Սուրիոյ շահերը:

Ժորժ Քասապ, Ստէյ Սաքըր, Ալֆրետ Մատի եւ Ժորժ Ապտէլ Մասիի յայտնեցին, որ Սֆէյր պատրիարք ըսած է, թէ վճռած է շարունակել զրական երկխօսութիւնը, հասնելու համար նպատակին:

Նշենք, որ ֆրանսական «Լիպերասիոն» օրաթերթին մէջ երէկ լոյս տեսած իր հարցապարոյցին մէջ, Սֆէյր պատրիարք ըսած է, թէ Լիբանան ապաւին չ'է անիւն քան կ'ընթանայ սուրիական հսկողութեան տակ, որ նոյնիսկ իր մարդիկը կը պարտադրէ պետական պաշտօններուն եւ դատական իշխանութիւններուն: «Պէքատի ղաշտի» ղուրս սուրիական ներկայութիւնը ապօրինի է 1992ին ի վեր, որովհետեւ Թաէֆի մէջ այդպէս նախատեսուած էր», կ'ըսէ Սֆէյր, նկատել տալով, որ այս ներկայութիւնը անիրաժէշտ չ'է, որովհետեւ Լիբանան ունի իր բանակը:

«Սուրիոյ նախագահի փոփոխութեամբ» ատենը հասաւ հեռացումին եւ բրիտանացիներուն լուսանցարին վիճակին վերջ պէտք է դնել», կ'ըսէ պատրիարքը, ընդգծելով, որ Լիբանանի գոյութիւնը վտանգուած է, իսկ երեսփոխանական ընտրութիւնները պատու չ'են եղած: Սֆէյր նաեւ կ'ըսէ, որ սուրիական ներկայութիւնը որոշ չափով պատճառ դարձած է երկրին դիմագրաւած տնտեսական աննախընթաց տագնապին:

ՊԱՐԱՔ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՍԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅ, ՈՐ ԱՆՍԻՋԱՊԵՍ ՄԵՐԺՈՒԵՑԱԻ ՊԱՂԵՍԻՆՅԻՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

Իսրայէլի վարչապետ Էհուտ Պարաք երէկ խաղաղութեան նոր առաջարկ մը ներկայացուց պաղեստինցիներուն. ան կ'առաջարկէ պաղեստինեան անկախ պետութիւն մը հռչակել, հրէական բնակեցման վայրերը կցել Իսրայէլի եւ երեք տարիով յետագայ տարիով յետագայի ճակատադիմի ճակատադիմի գաղթականներուն տունդարձի բանակցութիւնները:

Պարաքի առաջարկը անմիջապէս մերժուեցաւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եասէր Արաֆաթի խորհրդատուներուն կողմէ, որոնք շեշտեցին, որ խաղաղութեան որեւէ համաձայնութիւն պէտք է լուծուի անմիջապէս ընդհանուր հարցերուն, որոնց կարգին են Արեւելեան Երուսաղէմն ու պաղեստինցի գաղթականները:

Պարաք կոչ ուղղեց նաեւ իսրայէլացիներուն՝ յօրատելու կանգնելու իր առաջարկին: Վարչապետը ըսաւ, որ իսրայէլացիները պէտք է գիտակցին, որ չ'են կրնար միայն պէտքի ուժին ապաւինիլ լուծելու համար երկու ամիսէ ի վեր ծայր տունու տագնապը: Ան աւելցուց, որ Իսրայէլ ամէնէն յօրատու երկիրն է Միջին Արեւելքի մէջ. սակայն ապիկա չ'ի նշանակել, որ

ամէն տագնապ կարելի է բռնուցքի անուր հարուածով մը լուծել: Պարաք կը խօսէր այն պահուն, երբ բախումները կը շարունակուէին: Իսրայէլեան ուժեր 17 տարեկան պաղեստինցի ուսանող մը սպաննեցին ան երեք ուրիշներ այ վիրաւորեցին Սյըր-յորդանանի մէջ, Բեթ-ղեհէմի մօտ: Երկամսեայ բախումներուն պոհերուն թիւր բարձրացաւ 286ի: Իսրայէլեան բանակը յայտնեց, որ պիտուրները ձգալիս թէ փամփուշտներ արձակած են քարեր նետող պաղեստինցիներուն դէմ, զանոնք հեռացնելու համար: Բանակը աւելցուց, որ տեղեակ չ'է, թէ պոհեր ինչպէս են:

Պարաք, որ կը պատաստուի կանխահաս ընտրութիւններու համար ձեռնարկելիք արշախի, ըսաւ, որ նկատուի նենայն, որ մինչեւ օրս խաղաղութեան բոլոր ճիգերը ձախող են, սկսած է մտածել նոր առաջարկի մը մասին, որ պիտի երաշխաւորէ Իսրայէլի սահմաններուն ապահովութիւնը: Ան աւելցուց, որ իր առաջարկած համաձայնագիրը եթէ ընդունուի, հրէական բնակեցման մեծագոյն կեդրոնները Իսրայէլի պիտի միանան, իսկ պաղեստինցիները անկախ պետութեան կողքին պիտի ունենան յաւել-

եալ տարւտ հարիւր տարածութիւն մը, Այյորյորդանանի մէջ, որպէսզի մեծ թիւով անցարգելներէ չ'անցնին:

Պաղեստինցի պաշտօնատար Հասան Ասֆուր ըսաւ, որ պաղեստինեան իշխանութիւնը կը մերժէ որեւէ լուծում, որ ամբողջական չ'է: Արաֆաթի խորհրդատու Նապիլ Ապու Ռուտայնա, իր կարգին ըսաւ, որ Պարաքի առաջարկները կը մերժուին, որովհետեւ անոնք կը ներկայացնեն գրաւողի մտայնութիւնն ու տրամաբանութիւնը: Ան աւելցուց, որ համաձայնագիրը պէտք է լուծուի ապահով վերջնական կարգավիճակի բոլոր հարցերուն:

Պարաքի համար կենսական է յառաջիկայ քանի մը ամսուան ընթացքին խաղաղութեան համաձայնագիրը ստորագրութիւնը, որպէսզի ապահովէ իր վերընտրութիւնը: Հարցախոյզներուն արդիւնքներուն համաձայն սակայն, Պարաք յաղթելու յոյս չ'ունի: Վերջին հարցախոյզի մը համաձայն, եթէ ընտրութիւնները հիմա տեղի ունենան, Պարաք պիտի ապահովէ թուէներուն 37 առ հարիւրը, իսկ նախկին վարչապետ եւ Լիբոնտի նախկին ղեկավար Պենիամին Նեթանիահու՝ 51 առ հարիւրը: Պարաքի ժողովրդականութիւնը անկում արձանագրած է Քէմի Տէյվիտի վեհաժողովին ձախողութենէն ի վեր:

Միւս կողմէ, արտաքին գործոց նախարար Շլոմօ Պրն Ամի երէկ ըսաւ, որ տակաւին կարելի է պաղեստինցի Իսրայէլեան խաղաղութեան համաձայնութիւն մը իրականացնել, կանխահաս ընտրութիւններէն առաջ:



Էհուտ Պարաք

● **ՍՄՐԱՅԷԼԵԱՆ** ուստի կանխութեամբ յայտնեց, որ Ռամատանի տառիթով պիտի մեղմացնէ ապահովական կաշկանդումները, որոնց կ'ենթարկուին Արաֆաթի մեղքերը: Արաֆաթի ինքնապաշտպանութիւնը 45 տարեկանէն վար պաղեստինցիներուն:

● **ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ** ապահովութեան ուժեղացումը արաբները յայտնեցին, որ ձեռք բախած են արաբ մը, որ ենթարկուած գործակցած է Իսրայէլի հետ, սպաննելու համար Համասի պիտուրական ղեկավարներէն մէկը, Այյորյորդանանի մէջ: Ապահովութեան աղբիւրները հաղորդեցին, որ Այյան Պանի Ուտէ խոստովանած է, թէ մեղսակցած է Նոյեմբեր 23ի գործողութեան:

(ՌՈՅԹՐԸՉ)

ՆԱԻՐԱ ՄԵԼՔՈՒՄԵԱՆ ԿԸ ՉԵՐՔԷ, ԹԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՄԷՁ ՔԻՒՐՏԵՐ ԿԸ ԲՆԱԿԵՑՆԷ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան արտաքին գործոց նախարար Նաիրա Մելքոնեան հերքեց Ազրպէյճանի արտաքին գործոց նախարար Վիլյամ Կուլիբեի այն յայտարարութիւնը, թէ Հայաստան «գրաւեալ հողերու մէջ կը բնակեցնէ քիւրտեր»:

Կուլիբե այս յայտարարութիւնը կատարած է ԵԱՀԿ-ի անդամ երկիրներու արտաքին գործոց նախարարներու խորհուրդի նիստին:

Մելքոնեան ըսաւ, որ Ազրպէյճանցի նախարարը կը տարածէ լուրեր, որոնք չ'են համապատասխաներ իրականութեան: Ան ըսաւ, որ ոչ թէ Հայաստան, այլ Լեռնային Ղարաբաղի իշխանութիւններն են, որոնք կը բնակեցնեն հողերը՝ Հայաստանէն վերադարձող գաղթականներով: Մելքոնեան ըսաւ, որ Ազրպէյճանի այս յայտարարութիւնը կախեալ է թրքական քաղաքականութենէն: Այսպիսով, Ազրպէյճան կը փորձէ քողարկել Շահումեանի շրջանը չ'են ներգրծող բնակեցնելու իր քաղաքականութիւնը:

«Շատ վտանգաւոր է, որ այսպիսի սուտ պատմութիւններ տարածելու համար Ազրպէյճան կ'օգտագործէ ԵԱՀԿի արտաքին գործոց նախարարներու խորհուրդին պէս բարձր ատեն մը», ըսաւ Ն. Մելքոնեան:

Փոխօրին ԱԶՐՊԵՅՃԱՆ ՊԻՏԻ ԱՅՅԵԼԷ ՅԱՌԱԶԻԿԱՅ ՅՈՒՆՈՒԱՐԻՆ

TROISIEME SESSION! RESULTATS ??? ANNEE SCOLAIRE RATEE ?? ACADEMIE SOTHYS D'ESTHETIQUE ELYSSAR SUIVEZ NOTRE PROGRAMME D'ESTHETIQUE / COSMETIQUE SPECIALEMENT CONCU POUR VOUS

ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ ԼՈՅՍ ՏԵՍԱԿ

ՀԱՅԱՎՈՑ ԹԱՂԵՐՈՒ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒՐՈՒՄԻՍ «ԱԶԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅՈՒԹԵԱՆ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱՐ Պատմական - վկայակոչական բնօրինակ վերջ մը, որ կը ներկայացնէ 1975-1990 լիբանանահայութեան ինքնապաշտպանութեան առօրեան իր զանազան երեսներով: 416 էջ, 11 գլուխ

ՄՊԱՆԱՅԻ ԵՐԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՐ Կ'ԱՌԵՒՆԳՈՒԻ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՉ

ԹԻՖԼԻՍ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) - Սպանացի երկու գործարարներ առևանգուած են Հինգշաբթի օր Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի մէջ արուարձանին մէջ, յայտնած է պետական ապահովութեան նախարարութիւնը:

Պաշտօնատար մը ըսած է, թէ երկու գործարարները, որոնց առևանգումի գործողութեան ընթացքին կ'ընկերակցէր Թիֆլիսի երթուակին հսկող ոստիկանապետ Սուլիքո Քոպիաշվիլիին, իրենց ինքնաշարժին մէջ գտնուած են առևանգման պահուն:

Գործարարներու ինքնութիւնը յստակ չէղալ:

ՍՈՒՐԻԱ

ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ

Սուրիոյ նախագահ Պաշաբ Ասատ վաւերացուցած է օրէնք մը, որ արտօնութիւն կու տայ կառավարական ընկերակցութեան անդամ ըլլալը կուսակցութիւններուն՝ իրենց սեփական օրաթերթերը հրատարակելու, յայտնեցին պաշտօնատարները:

Նախագահ Ասատ յիշեալ օրէնքին գծով հաւանութիւն տուած էր իշխող Պաաս կուսակցութեան շրջանային հրամանատարութեան ժողովին, որ տեղի ունեցած էր Չորեքշաբթի օր եւ որ քննարկած էր առաջարկը: Ժողովը արտօնութիւն տուաւ նաեւ կառավարութեան անդամ կուսակցութիւններուն՝ ունենալու իրենց պաշտօնական կեդրոնատեղիները:

Նոր օրէնքը արտօնութիւն չի տար ընդդիմադիր կուսակցութիւններուն թերթեր հրատարակելու:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՆ

ԿԱՆՃԻ ԿԸ ՀԵՐՔԷ

ԹԵՀՐԱՆ, 30 (ՌՈՅԹԸՐԸ) - Իրանցի բարեկարգչական շարժումի հետեւորդներին Աքպար Կանճի հերքեց, որ Գերմանիոյ մէջ խորհրդածողովի մը մասնակցութիւնը սպառնացած է Իրանի ապագային ապահովութեան:

Կանճի ձեռքաւորուեցաւ եւ բանտարկուեցաւ Ապրիլին, Պերլինէն վերադարձին: Պերլինի մէջ ան մասնակցած էր Իրանի բարեկարգչական շարժումին ապագան քննարկող խորհրդածողովի մը: Կանճի եւ 17 ուրիշներ, որոնք մասնակցած էին խորհրդածողովին, ամբաստանուած են Իրանի ապահովութիւնը վտանգելու եւ իսլամական կառոյցին դէմ քարոզչութիւն տանելու եւ կրօնական սրբութիւնները անարգելու յանցանքով:

Կանճի, որ ներկայիս կը դատուի պահպանողական ատեանի մը կողմէ, անընդունալի նկատեց ամբաստանութիւնները, դիտել տալով, որ ամբաստանագիրը քաղաքական փաստաթուղթի տարողութիւն ունի, որ որեւէ ձեւով չ'առնչուիր դատական գործողութեան:

ԱՂԱՍԱՐԳԻՍԵԱՆ ՀԱՍՏ.

- ❖ SONY
- ❖ TOSHIBA
- ❖ PANASONIC
- ❖ SHARP
- ❖ PHILIPS
- ❖ SAMSUNG
- ❖ PIONEER
- ❖ MEC
- ❖ GENERAL ELECTRIC
- ❖ WHITE WESTINGHOUSE
- ❖ KELVINATOR
- ❖ HOOVER
- ❖ BOSCH
- ❖ MOULINEX
- ❖ BRAUN
- ❖ MIELE

ՎՃԱՐՄԱՆ ԳԻՒՐՈՒԹԻՒՆՆԵՐ 36 ԱՄՍՈՒԱՆ ՎՐԱՅ LISTE DE MARIAGE

Պորճ Համուտ - Զաղաքապետարանի հրապարակ, ՀԵՌԱԶԱՅՆՆ՝ 01-241000
Հող մուտք, Սանթրը Պանցոյէն: Կառատուը ապահովուած:

ԻՏԱԼԻՈՅ ՎԱՐՉԱՊԵՏ ԱՄԱԹՕ ԿԸ ԸԵՐՔԷ, ՈՐ Ե. ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿՐՆԱՅ ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԳԵՐՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԸ ՎԵՐԱԾՈՒԻԼ

Իտալիոյ վարչապետ ձիուլիանօ Ամատիոյ յայտնած է, թէ իր կարծիքով յառաջիկայ շաբաթ Ե. Միութեան կողմէ որդեգրուելիք հիմնական իրաւունքներու ուխտը օգտակար պիտի ըլլայ եւրոպական ինքնութեան մը կերտումին համար:

Ան ըսած է, թէ ասիական պիտի չփոխարինէ ապագային ինքնութիւնը, այլ անոր վրայ բան մը պիտի աւելցնէ, մերժելով ընդունելի այն մտավախութիւնները, թէ Ե. Միութիւնը կրնայ «դաշնակցային վերապետութեան մը» վերածուիլ:

«Յստակացնելով, թէ ինչ կը նշանակէ եւրոպացի ըլլալ եւ ո՛չ միայն իտալացի, ֆրանսացի կամ յոյն, ի վերջոյ պիտի կարենանք եւրոպական ժողովուրդի մը հիմնարկ դնել՝ հիմնուած ապագային ինքնութիւններու եւ քաղաքացիներու վրայ», ըսած է ան:

Ամաթօ յայտնած է, որ ուխտը պիտի նպաստէ Ե. Միութեան քաղաքացիներուն եւ հիմնարկութիւններուն միջեւ «բացը» գոցելու, նկատի ունենալով, որ անոնք յաճախ հեռուորդ եւ չներկայացուած կը թուին ըլլալ:

Կը նախատեսուի, որ Ե. Միութեան 15 երկիրներու ղեկավարները որդեգրեն ուխտը յառաջիկայ շաբաթուան Նիսի վեհաժողովին, սակայն մասամբ Բրիտանիոյ ձեռնմէջնուած պատճառով, անիկա օրինականօրէն պարտադրանքի տակ դնող պիտի չըլլայ:

Բրիտանացի կարգ մը թերահաւատներուն հին այն մտավախութիւնը, թէ ուխտը կը ներկայացնէ եւրոպական սաղմնային սահմանադրութիւն մը, որ կրնայ ձանձրան հարթել գերպետութեան մը, զոր իրենք կը մերժեն:

15 պետութիւնները կը յուսան Նիսի մէջ յայնաժիր բարեկարգումներու շուրջ համաձայնութիւն գոյացրնել՝ որոշումներու կայացումը արագացնելու եւ պլոքը պատրաստելու համար նոր անդամներ ընդունելու յառաջիկայ քանի մը տարիներուն:

ԸՆԴԱՐՉԱԿՄԱՆ ԳԾՈՎ ՅՍԱԿ ՅԱՆՁՆԱՌՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, Ֆինլանդիա Չորեքշաբթի օր Ե. Միութեան միւս

անդամներուն կոչուողած է, որ յստակ յանձնառութիւն ցուցաբերեն Նիսի իրենց վեհաժողովին՝ պլոքով եւ աշխատանքային նոր խմբակ մը կազմելով: Ե. Միութեան ապագայի տեսլական մը կերտելու համար:

Վարչապետ Փաաւօ Լիփիոնէն, որ կը խօսէր իր երկրին խորհրդարանին մէջ, յայտնած է, թէ Ֆինլանդիայէ, որ պլոքին ընկալած արձանագրութիւնները, թէ Ե. Միութիւնը կրնայ «դաշնակցային վերապետութեան մը» վերածուիլ:

Ան դիտել տուած է, որ կարիքը կայ Միութեան նպատակը եւ աշխատանքները յստակացնելու, յայտնելով, որ Միութիւնը յաճախ շատ դանդաղօրէն կը հակադարձ աշխարհի մէջ պատահած փոփոխութիւններու եւ քաղաքացիներու ակնկալութիւններուն:

ՄԻՆՉԵՒ 2003 ԸՆԴԱՐՉԱԿՄԱՆ ՊԱՇԱՆՁ

Մինչ այդ, Ե. Միութեան անդամակցիլ փափաքող երկիրներու ապագային խորհրդարանները այս շաբաթ յայտնած են, թէ կ'ուզեն, որ անդամակցութեան գործընթացը արագացուի, որպէսզի 2002ին պլոքը ընդարձակման համար պատ-

րաստ ըլլայ: Լիմասոլի մէջ (Կիպրոս) երկօրեայ ժողովի մը աւարտէն հրապարակուած միացեալ հաղորդագրութեան մը մէջ, 12 երկիրներու խորհրդարաններու նախագահներ ըսած են, թէ Եւրոպական Յանձնաժողովը եւ Ե. Միութեան անդամ պետութիւնները պէտք է թափ տան բանակցութիւններուն, որպէսզի անդամակցութեան համար բանակցութիւնները յաջող կերպով ամբողջացուցած երկիրները 1 Յունուար, 2003ին միանան պլոքին:

Ժողովը համակարգումի բեմ մըն է Եւրոխորհրդարանին եւ անդամակցութեան համար բանակցութիւնները վարող պետութիւններու միջեւ: Թուրքիա, որ անցեալ տարուան Հելսինքիի վեհաժողովին անդամակցութեան թեկնածու նշանակուած էր, չէ մասնակցած ժողովին:

Անգարա պայրոյթ արտայայտած է Ե. Միութեան մէկ որոշումին գծով, որ կը վերաբերի Կիպրոսի հարցը դնել բարեկարգումներու քննարկի մը մէջ: Թուրքիա պիտի չգործադրէ պանոնք, որ պէսզի կարենայ անդամակցութեան համար բանակցութեանը սկսիլ:

(ՌՈՅԹԸՐԸ)

ՓՈՒԹԻՆ ԿԸ ՄԵՐԺԷ ՆՈՐ ԵՐԿԱԾԵԱՅ ՎԱՐԱԳՈՅՐԻ ՍԸ ԳԱՂԱՓԱՐԸ

Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին այս շաբաթ յայտնած է, թէ ուժեղ կերպով պաշտպանուած սահմաններ կենսական են երկրին ապագային համար, սակայն ան մերժած է արտաքին աշխարհին առջեւ նոր երկաթեայ վարագոյր մը բարձրացնելու գաղափարը: Փութին հետզհետէ աւելի ազդեցիկ դարձող Ապաշտօնութեան խորհուրդին յայտնած է, թէ Ռուսիա իր շուրջ 60 հազար քիլոմետրի վրայ երկարող սահմանագիծին վրայ ուժեղ պաշտպանութիւնը պիտի պահպանէ, հակառակ ուժերու թիւը կրճատելու որոշումին: Կրեմլինի ղեկավարը ըսած է, որ թէեւ Ռուսիոյ սահմանները ուժեղ կերպով պէտք է պաշտպանուին, այս սուհանդերձ ինք չ'ուզէր վախճելու «փախցնել» պետութիւններ՝ անցեալի վայրագ ուսուցանող արջին: Ապաշտօնութեան խորհուրդը, որ խորհրդատու մարմին մըն է, այս ամսուան սկիզբը հաւանութիւն տուած է Ռուսիոյ զինեալ ուժերու կրճատման գաղափարին:

ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱԳԱՆՆԵՐՈՒ ԱՌԱՆՁԱՆՆՈՐԸՈՒՄՆԵՐ

Միւս կողմէ, Ռուսիոյ խորհրդարանը Չորեքշաբթի օր ընդունած է շաբթ մը առանձնաշնորհումներ յատկացնել նախագահներուն՝ անոնց նստաշրջանին աւարտէն ետք, գործնապէս վաւերացնելով նախագահ Վլատիմիր Փութինի մէջ հրամանագիրը, որմէ կ'օգտուի անոր նախորդը՝ Պրիսկա Ելցինը: Պետական Տոման միջոցառումը վաւերացուցած է 130ի դէմ 282 քուէներով, նախկին նախագահներու եւ անոնց ընտանիքներուն տրամադրելի դարձնելով շաբթ մը առանձնաշնորհումներ, որոնց կարգին՝ դատական հետապնդումի գծով անձեռնմխելութիւն:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԻՐԱՔ ԿԸ ՄԵՐԺԷ ՄԱԿԻ ԲՆՆԻՉՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Իրաքի փոխ վարչապետ Թարէք Ազիզ մերժեց ՄԱԿի բնիչներուն վերադարձը, շեշտելով սակայն, որ Պաղատաւ լանկցութիւնները պիտի կատարէ միջազգային կազմակերպութեան հետ:

Ազիզ, որ կը խօսէր Ռուսիա կատարած այցելութեան աւարտին, դիտել տուաւ, որ Իրաք պիտի չընդունի զէնքի բնիչներուն վերադարձը: Ան աւելցուց, որ ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան կ'առաջարկէ Ժամանակացոյցի մը մասին խորհրդակցել, որպէսզի կարելի ըլլայ տիրակի սկսիլ Իրաքի հետ: Ազիզ ըսաւ նաեւ, որ Անանի առաջարկը կը բնարկուի Պաղատաւի մէջ եւ թէ բնարկումին լոյսին տակ որոշում պիտի տրուի Ան սակայն չըսաւ, թէ Պաղատաւ որոշումը ե՞րբ պիտի հրապարակուի:

Աւարտելէ ետք Մոսկուա այցելութիւնը, Ազիզ ուղղուեցաւ Դամասկոս, ուր կարճատեւ այցելութենէ մը ետք, Պաղատաւ պիտի վերադառնայ: Ռուս պաշտօնատարներ մանրամասնութիւններ չէին փոխանցած Ազիզի եւ արտաքին գործոց նախարար Իկոր Իվանովի տեսակցութեան ընթացքին արձարձուած նիւթերուն մասին: Երկու պաշտօնատարները նախապէս որոշած էին մամլոյ միացեալ ասուլիս մը տալ, սակայն աւելի ուշ, յայտարարուեցաւ, որ ասուլիսը ջնջուած է:

Միւս կողմէ, ՄԱԿի պաշտօնատարներ Չորեքշաբթի օր յայտնած էին, որ Անան եւ իրաքցի ղեկավարը համաձայնութիւն գոյացուցած են Յունուարին բանակցութիւններու սկսելու:

ՄԱԿի Ապաշտօնութեան խորհուրդի մասնուն անդամներէն Չինաստան, Ռուսիա եւ Ֆրանսա համաձայն են, որ Իրաքի դէմ հաստատուած պատժամիջոցները մեղմանան եւ ապա՝ ջնջուին: Միացեալ Նահանգներ եւ Բրիտանիա սակայն, կը պնդեն, որ պատժամիջոցները պիտի ջնջուին այն ատեն միայն, երբ Իրաք ամբողջութեամբ ենթարկուի Ապաշտօնութեան խորհուրդի բոլոր որոշումներուն:

ԻՐԱՔ ԵՒ ՄԱԿ ՏԱՐԱԿԱՐՈՒՄԻՆ ԶԱՐԻՒԴԻ ՍԱԿԵՐՈՒՆ ԳԾՈՎ

Իրաք եւ ՄԱԿ երէկ չկարողացան լուծել իրենց տարակարծութիւնները քարտուղի սակերուն մասին: Եթէ հարցը չլուծուի, այսօրուէն սկսեալ Իրաքի քարտուղի արտածումները պիտի առկախուին:

Իրաք քարտուղի նոր սակերու առաջարկ ներկայացուցած էր ՄԱԿին՝ Դեկտեմբերին տեղի ունենալիք արտածումին համար: ՄԱԿ կը մերժէ Իրաքի առաջարկած սակերը: Իրեւ միջին լուծում, Իրաք կ'առաջարկէ երկարաձգել Նոյեմբերի սակերուն պայմանաժամը, որ առիթ կու տայ Պաղատաւի արտածումը շարունակելու: Սակայն ՄԱԿ տակաւին հաւանութիւն չէ տուած:

Միւս կողմէ, Ռաշինկիլը մտահոգ չէ իրաքեան քարտուղի արտածումին առկախելու կարելիութենէն, որովհետեւ Միացեալ Նահանգներու դաշնակիցները խոտացած են լաւելեալ արտածումներ կատարել՝ գոցելու համար ստեղծուելիք բացը: Ռաշինկիլը պատրաստակամութիւն յայտնած է նաեւ իր պահեստներուն դիմելու:

(ՌՈՅԹԸՐԸ)

ԱՅ ԸՒՂ

ՀԻՒԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ԾԱՌԱՅԵԼԸ ՄԵՐ ՄԿԶԲՈՒՆՔՆ Է

1500 ԱՆԴԱՄ

100000\$ Ի ԿԻՒԱՆԴԱՆՈՅԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹԻՒՆ

90 ԿԻՒԱՆԴԱՆՈՅՆԵՐ

76 ՏԱՐԱՆՈՒԹԱՐԱՆԱՅԻՆ ԿԵՂՈՆՆԵՐ

ԱՅԿԻ - ԱՅԵՏԻ ԶԵՆԸ, Բ. ՅԱՂԿ (ԿԵՂ. 01/262231 - 01/2425567

ՄԱՍԹԵՐ ՄՈՒ

ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՄՆ ԵՒ ԽԹՄԱՆ ԳԻՇԵՐԸ ԶՈՒՄՑՈՒՅԸ ԶԵՐ ՄԵՂԱՆԸ ՕՐՈՒՄՆ ԱՒԱՆԳԱԿԱՆ ԶԱՇՆՆԻՆԻ ԿԱՏԱՐԷ՝ ՍԻՒՓԸՐՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԸՆ

MASTER ALL supermarket

ԳՆՈՒՄԴ ԿԱՏԱՐԷ՝ ՍԻՒՓԸՐՄԱՐՔԷԹ ՄԱՍԹԵՐ ՄՈՒԸՆ

ԱՐՑԱԽԻ ՄԷՋ ԿԸ ԿԱՅԱՆԱՅ Ղ.Յ.Գ. 110ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ ԵՐԻՏԱՄԱՐԴԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ

Վերջերս Ստեփանավանի «Կարկառ» ճամբարին մէջ տեղի ունեցած Ղ.Յ.Գ. Արցախի Երիտասարդական Միութեան վարչական Միութեան համարգրական առաջին բանակումը: Արցախի տարրերը չընդունող ԿԸ մասնակցները ստիպուած են խանդավառութիւն չհաղորդեց երիտասարդներին:

Ղ.Յ.Գ. Դաշնակցութեան 110ամեակին նուիրուած բանակումը ունեւր հարուստ ծրագրեր մը: Տեղի ունեցան զաստիաստութիւններ՝ «Հայ Դատ», «Ղ.Յ.Գ. Դաշնակցութիւնը Արցախի մէջ», «Ղ.Յ.Գ. Դաշնակցութեան ծնունդն ու զարգացումը», «Ղ.Յ.Գ. Դաշնակցութեան ծնունդն ու զարգացումը» եւ այլ թեմաներով:

Բանակումին ամէն մէկ օրը նուիրուած էր Ղ.Յ.Գ. Դաշնակցութեան հիմնադրողներին՝ Քրիտամփոր Միքայէլեանին, Սիմոն Չաւարեանին եւ Թոստոմբ: Բանակումին բացման ողջոյնի խօսքով հանդէս եկան Ղ.Յ.Գ. Արցախի կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Գ. Հայրապետեանը, Ղ.Յ.Գ. Արցախի կեդրոնական կոմիտէի անդամ եւ Երիտասարդական Միութեան կապի պատասխանատու Ս. Ամիրխանեան, Լեոնային Ղարաբաղի Հանրապետութեան Ազգային Ժողովի Ղ.Յ.Գ. խմբակցութեան նախագահ Վ. Բալայան, Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթական նախարարի երիտասարդական

կան հարցերով տեղակալ Շ. Սարգսեան եւ Ղ.Յ.Գ. Արցախի Երիտասարդական Միութեան վարչական խոստում տուին Ղ.Յ.Գ. Արցախի Երիտասարդական Միութեան շարքերում միանալու համար:

Բանակումի եւ օրեայ աշխատանքներում Ընթացքին դաստիարակութեան նիւթերէն զատ, մեծ տեղ յատկացուած էր մարզական եւ ռազմական միջոցառումներուն, իսկ վերջին օրը կազմակերպուեցան զարգացման մրցում մը, որուն հարցումները զլխաւորաբար կազմուած էին զաստիաստութեան նիւթերէն: Յաղթողները նուէրներու արժանացան:

Նոյն օրը Ղ.Յ.Գ. Բիւրոյի անդամ Ալլախբաբ Աճեմեանի կնքհայրու-

թեմար կազմակերպուած էր նաեւ երդման արարողութիւն մը: Շուրջ 45 երիտասարդներ երդման խոստում տուին Ղ.Յ.Գ. Արցախի Երիտասարդական Միութեան շարքերում միանալու համար:

Ղ.Յ.Գ. Արցախի Երիտասարդական Միութեան ներկայացուցիչները յայտնեցին, որ այսուհետեւ պարբերաբար պիտի կազմակերպեն երիտասարդական բանակումներ, հետապնդելով մէկ գերագոյն նպատակ՝ ամբողջով մեր նոր սերունդին ոգիին, որուն զօրութեամբ միայն կարելի պիտի ըլլայ վերականգնակերպել հայոց աշխարհը:

1700ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՐՑԱԽԻ ՅՈՒՇԱՐԶԱՆՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄԸ

Հայաստանի մէջ քրիստոնէութեան պետական կրօն հռչակման 1700ամեակի նախօրեակին Լեւոնային Ղարաբաղի մէջ աշխատանք կը տարուի պատմական յուշարձանները վերանորոգելու համար:

Վերջերս Լեւոնային Ղարաբաղի Մարտունի շրջանի Հացի գիւղին մէջ վերարտադրուած «Քրի Նշխար» (12 - 13րդ դարեր) եկեղեցական համալիրը: Գտնուելով Անդրկովկասի եւ Իրանի սահմանագիծին վրայ՝ անցեալին «Քրի Նշխար» կապով իւրայատուկ օղակ էր Արեւմուտքի եւ Արեւելքի միջեւ:

Համալիրին վերանորոգումը կ'իրագործէ Լեւոնային Ղարաբաղի մշակույթի, երիտասարդութեան հարցերու եւ մարմնակրթական նախարարութեան յուշարձաններու պահպանութեան եւ ուսումնասիրութեան վարչութիւնը:

Ներկայիս աշխատանքներ կը տարուին Ստեփանավան քաղաքի եւ անոր շրջակայքի յուշարձաններու հաշուառման ուղղութեամբ: Արդէն ցանկազուած են աւելի քան երկու տասնեակ եկեղեցիներ, հնագոյն կամուրջներ, խաչքարեր եւ գերեզմանատուներ: Մտիկ ապագային կը նախատեսուի Արցախի յուշարձաններով հարուստ երկու շրջաններու՝ ինչչինի հովիտի ու Տոյաձորի մէջ հիմնել քաղաքացիական թանգարան եւ արգելափակում:

ԿԱՏԱՐՈՂՈՒԹԵԱՄ ԸՆԻ ՔԵՐՈՒԲԵՆԻ ԴԱՇՆԱԿԻ ՅԻՇԱՐԺԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒԹԻՒՆ «ԷՍԵՄՊԼԻ ՀՈԼ»Ի ՄԷՋ

Լիբանանահայ երաժշտական կեանքին մէջ հաճելի նորութիւններ միշտ ալ կան, որոնք ցուցանել են ոչ միայն մեր գաղութի երաժշտական կեանքին մէջ հետզհետէ աւելի հետաքրքրական երեւոյթներու առկայութեան, այլեւ՝ որոշ առումով Լիբանանի երաժշտական կեանքին մէջ տեղի ունեցող դրական փոփոխութիւններու, նոր հետաքրքրութեանց յառաջացումին ու նոր անուններու երեւումին:

Տարբեր ու բաժնետակաս երեկոներու շրջանի մը մէջ խրախուսելի երեւոյթ եղած «Հատուր Գարակէօզեան» հիմնարկին կազմակերպած եւ Լիբանանի մատուցող երաժշտական նուիրուած դաշնակի ունկընդրութեան երեկոն, կիրակի, 19 Նոյեմբերի երեկոյան ժամը 7:00ին, Ամերիկեան Համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ի մէջ, կատարողութեամբ Անի Քերոբեանի եւ հօգնակողներութեամբ Լիբանանի առաջին տիկին Անտրէ Լահուտի:

Անի Քերոբեան աշակերտն է լիբանանահայ յայտնի երաժշտահայ եւ դաշնակահար Պօղոս Ճելալեանի: Գեղեցիկ մտայնացումով մը անուշ երաժշտական սոյն երեկոն նուիրած են Հարաւային Լիբանանի որբերուն: Անի Քերոբեան շրջանաւարտ է Ֆրանսայի Պոլուսը - Պիանոլեր եւ Յորդանանի երաժշտանոցներէն:

Անի Քերոբեան մատուցեց դաշնակի հանրայայտ երկերէ կազմուած ռաւական բարդ եւ յարակալական յայտագիր մը, որ կ'ընդմիջուէր յայտագիրի իւրաքանչիւր հեղինակին ու երգին մասին էջիէն Քիւփէյեանի տուած հակիրճ բացատրութիւններով: Լաւ մտածուած նախաձեռնութիւն մը՝ յատկապէս «Նորիկ» ունկընդրուած երկերի մատչելի դառնալու համար:

Երկու բաժնիներէ կազմուած ունկընդրութեան երկուն սկսած Սքարլաթի երկու սոնետներով (Թիւ 256 եւ 486), յաջորդեցին՝ Ալաբերդի «Սելիլլա»ն, Շոփէնի երորդ «Էդիլու»ը եւ Պեթհոպի «14րդ Սոնատ»ին երրորդ մասը:

Նուագահանդէսին երկրորդ բաժինը ընդգրկեց Տեպետի «Տր սնու իլ տանսինկ» եւ «Քոյիվօլկ քէյքուք», Պրամսի առաջին «Ռայստի», Աւսո Պապաշանեանի «Գարիպի»-ն եւ Պարսի - Պուրիի «Չաքոն», որոնք ընդմիջեցին Անի Քերոբեանի ներկայացած իրեն լաւ պատրաստուած դաշնակահար մը՝ օժտուած երաժշտական բարձր արժանիքներով: Ա. Քերոբեանէն նոր յաջողութիւններ կը սպասուին: Արժանի պէտք է մատուցել անպայման նաեւ ուսուցիչին՝ մեր երաժշտական կեանքին մէջ մեծ ներդրումներու տէր Պօղոս Ճելալեանին իր ժրջան աշխատանքին ու վաստակին համար:

Չ. Բ.

ՀԱՅ ՄԸ՝ ՄԵՔՍԻՔԱՅԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ

«Ապարիլ» կը հաղորդէ, որ Մեքսիքայի նորընտիր նախագահ Վիսենթէ Ֆաբրե Ընկերային զարգացման նախարար նշանակած է հայ ակադեմիական մը՝ դոկտ. Հոգէ Սարգիսն Քրրմըզը:

Հոգէ Սարգիսն Քրրմըզը, 60 տարեկան, Դեկտեմբերին պիտի ստանան իր նոր պաշտօնը եւ առաւելարար պիտի զբաղի կրթութեան, առողջապահութեան, գիտութեան եւ մարդկային զարգացման հարցերով:

Ան ծնած է Մեքսիքա՝ Երեւանէն ու վեներուկէն գաղթած ծնողներէ: Մասնագիտութեամբ ծովային կենսաբան է: 1989էն 1996 վարած է Մեքսիքայի Ազգային Ինքնավար Համալսարանի տեսուչի պաշտօնը:

ԱՃԻԱՐԿԻ ԳԱՐՁԱԿԱՆՆԵՐՈՒՄ ԱՍԿԵՐԸ

ՄԱԿԻ վերջերս հրատարակուած մէկ տեղեկագրի մէջ ներկայիս կան 11,7 միլիոն գաղթականներ: 3,7 միլիոն պաղեստինցիները կը կազմեն գաղթականներու ամէնէն մեծ խմբակը՝ տարածուած Յորդանանի, Լիբանանի, Սուրիոյ, Կապույի եւ Ալյորի յորդանանի մէջ: Միացեալ Նահանգներու մէջ կան 513 հազար գաղթականներ: Հետեւեալ ցուցակը ցոյց կու տայ տասը երկրներ, որոնք մէջ ամէնէն մեծ թիւով գաղթականները կը դռնուին:

Գերմանիա - 975 հազար գաղթականներ իրանէն, Իրաքէն, Թուրքիայէն եւ նախկին Եւրոպայէն:

Հայաստան - 296 հազար՝ Ազրպէյճանէն:

Սոււան - 391 հազար՝ Էրիթրէայէն եւ Եթովպիայէն:

Կինիա - 501 հազար հինգ հարիւր՝ Լիպերիայէն եւ Սիեռա Լիոնէն:

Քոնկոյի ժողովրդավար Հանրապետութիւն - 285 հազար երկու հարիւր Անկոլայէն, Պուրունտի, Քոնկոյէն, Իսուանտայէն եւ Սուուանէն:

Իրան - 1,8 միլիոն Աֆղանիստանէն եւ Իրաքէն:

Փարսիստան - 1,2 միլիոն Աֆղանիստանէն:

Չինաստան - 293 հազար՝ Վիեթնամէն:

Եթովպիա - 257,700՝ Քենիայէն, Սոմալիէն եւ Սոււանէն:

Թանզանիա - 622,200՝ Պուրունտիէն, Քոնկոյի ժողովրդավար Հանրապետութեան եւ Իտալիայէն:

ԼՈՒՐԵՐ՝ ՊՐԱԶԻԼԻ ՀԱՅ ԳԱՂՈՒԹԻՆ

Պրագիլի իշխանութիւնները, բարձր գնահատելով երկրի հայ համայնքի ու անոր տարած աշխատանքները երկրի զարգացման եւ բարգաւաճման համար, Պրագիլի մեծ քաղաքներուն քանի մը փողոցները, հրապարակները, գեղատուրի կայարանները եւ օդային կամուրջները անուանած են «Արմենիա»: Անոնց կողքին Սան Փաուլո քաղաքի «Արմենիա» հրապարակին վրայ տեղադրուած է Հայոց Յիշատակութեան զոհերուն յիշատակը յանգեցնող յուշարձան մը:

Միւս կողմէ, Պրագիլի իշխանութիւններուն այս բարեացակամութիւնը փոխադարձելու նպատակով Երեւանի քաղաքապետարանը 11 Մայիս 2000ին որոշած է «Հրազդան» մարզադաշտին յարող տարածքը անուանել «Պրագիլի հրապարակ»: Այս որոշումը մեծ ոգեւորութեամբ ընդունուած է թէ՛ Պրագիլի իշխանութիւններուն եւ թէ՛ երկրի հայ համայնքին կողմէ:

Պէտք է նշել նաեւ, որ Պրագիլի մէջ Հայաստանի գիտնոր իւրապատուութեան նախաձեռնութեամբ Ապրիլ 2000էն սկսեալ Սան Փաուլո քաղաքին մէջ յոյս կը տեսնէ «Լուրեր» անունը կրող 12-14 էջնոց տեղեկատու: Ան կ'ընդգրկէ տեղեկութիւնները Հայաստանի ներքին կեանքին, արտաքին քաղաքականութեան, հայպարզեան յարաբերութիւններուն, հիւպատոսարանի աշխատանքներուն եւ այլ նիւթերու մասին:

«ԲԱՅ ՆԱՍԱԿ» ՄԱՏԵՆԱՇԱՐԸ ԼՈՅՍ ՎԵՆԾԱՅԷ «ՅՕԳԻ ՄԷՋԷ» ԱՆԳԼԵՐԷՆ ԲԵՐԹՈՒՎԾՆԵՐՈՒ ՀԱՏՈՐԸ

Հնդկմբեր ամսուան ընթացքին յոյս տեսած է Լոս Անճելիս «Բայ Նասակ» մատենաշարի 4րդ հատորը՝ Լեւոնուրու Ալիշանի «Յօղի մէջէն»-ը (Թորու Տիտորափ): Հատորը անգլերէն քերթումներու հիւստիանով մը՝ յօրինուած ճապարակաբար քաղաքացիական կազմակերպչական (Հայրու, Սեմիո, Թաքա):

Ալիշանի այս սեղի քերթումները հրատարակուած են Միացեալ Նահանգներու, Քալիֆորնիայի, Նոր Զելանդիայի եւ Իտալիոյ մէջ՝ արժանանալով բազմաթիւ մրցանակներու: Անոր բանաստեղծութիւններու տաղան հրատարակուած է «Պարզի ստեղծարար փրջումը ապակիներու վրայ» (Տաճարի պրոֆուր ան Պրոքըն Կլաւս) հրատարակուած է 1991ին:

102 էջնոց հատորին գինը 7 տոլար է, անքաղաքացիական ծախսը: «Յօղի մէջէն»ը կարելի է ստանալ «Բայ Նասակ» խմբագրութեան՝ դիմելով հետեւեալ հասցեին.

Open Letter
1208A East Lexington Drive,
Glendale,
CA 91206

- Հեռագրային (818) 546 - 2821
- Ֆաքս (818) 546 - 1671
- Ի-մէյլ: opletter@pacbell.net.
- Ուեբայր: www.opletter.com

1700ԱՄԵԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՏԻ ՕՐԱՅՈՅՑԸ. 2001 ՀԱՅՈՅ ԳԱՐԱՒՈՐ ՎԱՆՔԵՐՈՒ ՏՈՂԱՆՑՔԸ



Արմասուրապէս նշելու համար Հայաստանի մէջ քրիստոնէութեան ընդունման 1700ամեակը, Լիբանանահայ Օգնութեան Խաչի Շրջանային վարչութիւնը կը բերէ իր մասնակցութիւնը պանծալի դարադարձի հրատարակչական աշխատանքներուն՝ գեղատիպ օրացոյցի մը յոյս ընծայումով:

Պատի օրացոյց մըն է, որուն իւրաքանչիւր ամսուան էջին կը տեսնուի Հայաստանի պատմական, դարասր վանքերու գունաւոր յուսանկարները, որոնք կը յուշեն մեզի դարասր ու շքեղ ճարտարապետութեան մը ընդմէջէն հայոց պատմութիւնն ամբողջ՝ իր մշակոյթով, հասարակ եւ հանճարով յորդուն գեղեցկութեանը:

Իւրաքանչիւր ամիս մեզի կը ներկայացնէ նշանաւոր վանք մը, եկեղեցի մը, ամէն մէկը՝ իւրայատուկ կառոյցով կերտուած: Երրորդ դարէն մինչեւ 17րդ դար կ'երկարին այս վարմանահարաւ կառոյցները: Իւրաքանչիւրին մասին հակիրճ ծանօթագրութիւններ արձանագրուած են օրացոյցի մէկ էջին՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով: Եթէ օտարալեզու անձի մը նուիրեց օրինակ մը այս օրացոյցին, անոր փոխանցած պիտի ըլլանք հայոց պատմութիւնը մը ամբողջ իր խորքով. ճակատագրային իմացումով: Նաեւ ցոյց պիտի տրուի հայ ժողովուրդի պատմութեան տաղանքն ու հանճարը, մասնաւորաբար՝ հայկական ճարտարապետութեան եզակի, ինքնուրուի դիմագիծը: Ճարտարապետութիւն՝ որ յաջողած է ստեղծագործուած է Գ. դարէն մինչեւ միջնադար, երբ Եւրոպայի ղեկ խաւարի մէջ էր, իսկ Ամերիկայի գոյութիւն իսկ չունէր իբրէ մարդաբան աշխարհ:

Բայց, օտարալեզու անձ պէտք է մենք ծանօթանալ մեր փառասր, դարասր, շքեղ պատմութեան, մեր հանճարեղ հայրերուն արեւտին, ու այն ատեն պարծենալքս եւ ըսենք իւրովի. պատի՛ւ այսպիսի հրաշագեղ վանքեր.



Կանաւասար

արքայարք, եկեղեցիներ ստեղծող ժողովուրդին, գեթ փոխանցենք մեր պատմութեան հայ ժողովուրդի գանձերը, ինչ փոյթ թէ... նկարներով միայն: Այդ քան մըն է:

ԼՕՏԻ Շրջանային վարչութիւնը գովելի աշխատանք մը իրագործած է 1700ամեակը յիշատակելով ու փարստերելով 12 տաճարներով, որոնք կը կոչուին՝ Էջմիածին, Խոր վրայ, Գօշավանք, Հաղթար, Հաղարծին, Գանաւասար, Գլաճար, Տաքե, Սաղմուսավանք, Դադի վանք, Գեղարդավանք:

Օրացոյցի կողքին՝ ԼՕՏԻ նշանակն է: Յաջորդաբար ամսաթիւները, նկարներով: Առաջին էջին (Յունուար ամիս) տպուած է Էջմիածնի տաճար, հակիրճ բացատրութեամբ (4-17 դար):

Հայկական ճարտարապետութեան հնագոյն կրթութիւնէն:

2.- Խոր վրայ վանք (17րդ դար), Արարատեան դար: Կառուցուած է Ս. Գրիգոր Լուսաւորչի արգելափակման վայրին վրայ:

3.- Գօշավանք (12-13 դար), Կիլիկիայ: Հիմնուած է անուանի գիտնական Միխայիլ Գօշի կողմէ: Կը բովանդակէ փոքր մատուռներ եւ խաչքարեր:

4.- Հաղթար (13 դար), Թումանեան: Պատմական Հայաստանի կարեւոր վանքերէն. նշանաւոր է իր ձեռագրատուներով եւ եռաթաղ կանգակատունով:

5.- Գանաւասար (13 դար), Ղարաբաղ, Լեւոնային Ղարաբաղի ամէնէն նշանաւոր վանքերէն, Լաւորչի օրինակն է ճարտարապետութեան եւ

ԳԱԼՈՒՍ ՄԱՀԱԿԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ «ՄԻԱՄՈՒԹԻՒՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀ

Երկուշաբթի, 27 Նոյեմբերի նիստին, Հայաստանի Ազգային Ժողովի «Միասնութիւն» խմբակցութեան նախագահ ընտրուեցաւ Հայաստանի Հանրապետական Կուսակցութեան (ՀԿԱ) անդամ Գալուստ Սահակեան: Յայտնենք, որ խմբակցութեան նախկին նախագահ Անդրանիկ Մարգարեանի 12 Մայիսին վարչապետ նշանակուելէն ետք այս պաշտօնը թափուր կը մնար:

ԾԱՄԵՆԳՈՒՄՑ
Շարք էջ 8

ՀԱՍԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԷՆ
HAMPIG SASSOUNIAN C- 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536 USA

Միջապագային Քաղաքական

ՃՆՇՈՒՄՆԵՐՈՒ ԲԱՐՁՐԱՅՈՒՄԸ ԿԸ ՆՈՒԱԶԵՑՆԷ ՊԱՐԱՔԻ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Իմաստով մեկուսացած է եւ քաղաքականացած տկարացած, կը փորձէ ընդդիմանալ այդ գործընթացին՝ խաղաղութեան գործընթացին օրինակալու լինելու վերականգնելու:

Առաջին ազդանշանը ի յայտ եկաւ 22 Նոյեմբերին, երբ Պարաք յայտարարեց, թէ Իսրայէլ վրէժ պիտի չլուծէ Հիւսիսային Իսրայէլի Հարերա քաղաքին մէջ ինքնաշարժի ահանահարման համար: Այս պատասխանը յատկանշական է երկու իմաստով: Նախ՝ Իսրայէլ յարձակումներու դէմ ուղղակի եւ արագ վրէժի ներդրութեան քաղաքականութիւն ունի. երկրորդ՝ յարձակումը տեղի ունեցած էր Հրէական հողերուն մէջ, շրջան մը, ուր պաղեստինեան խմբակներ ընդհանրապէս դժուարութեամբ գործողութիւններ կրնան կատարել:

Ինքնաշարժի ահանահարմարը նեղ կացութեան մատնեց Պարաքը: Մէկ կողմէ յարձակումը բաւ-

կան լուրջ էր ծանր պատասխան մը ստանալու համար, միւս կողմէ՝ ականուած ինքնաշարժի պայթումը պաղեստինեան կարգ մը խմբակներու կողմէ զգուշացման ահազանգ մըն էր, ինչպէս նաեւ՝ Իսրայէլի ապահովական ուժերուն ձախողութեան նշանը:

Պաղեստինցի հրամանատարներ կը զիտակցին, թէ իրենց ենթակառոյցները տակաւին չեն կործանուած: Միաժամանակ նկատուեալով Իսրայէլի ապահովական ուժերուն անոնք պիտի ակնկալեն, որ Իսրայէլ շուտով պիտի յարձակի եւ քանդէ այդ ենթակառոյցները: Ասիկա պաղեստինցիները կը դնէ «գործածէ՛ գայն կամ կորսնցուցու» իրավիճակին մէջ: Պաղեստինցիներու շահերուն կը համընկնի, որ յանկարծակի յարձակումներու ալիք մը յառաջանան, քան թէ խնայողութեամբ օգտագործեն իրենց միջոցները:

Լիբանոսի առաջնորդ Արիէլ Շարուն ազգային ապահովութեան կառավարութիւնը ստեղծելու Պարաքի առաջարկը մերժեց: Շարուն կ'ուզէ, որ պաղեստինեան ենթակառոյցներուն դէմ ամբողջական եւ ծաւալուն յարձակում գործուի: Շարուն նաեւ զիտէր զաղտնի ծառայողութիւններուն տկարութիւնները եւ չ'ուզեր պաղեստինեան յարձակումներուն դէմ դնելու ձախողութեան պատաստի ունենալով Իսրայէլի ապահովական ուժերուն անոնք պիտի ակնկալեն, որ Իսրայէլ շուտով պիտի յարձակի եւ քանդէ այդ ենթակառոյցները: Ասիկա պաղեստինցիները կը դնէ «գործածէ՛ գայն կամ կորսնցուցու» իրավիճակին մէջ: Պաղեստինցիներու շահերուն կը համընկնի, որ յանկարծակի յարձակումներու ալիք մը յառաջանան, քան թէ խնայողութեամբ օգտագործեն իրենց միջոցները:

Լիբանոսի առաջնորդ Արիէլ Շարուն ազգային ապահովութեան կառավարութիւնը ստեղծելու Պարաքի առաջարկը մերժեց: Շարուն կ'ուզէ, որ պաղեստինեան ենթակառոյցներուն դէմ ամբողջական եւ ծաւալուն յարձակում գործուի: Շարուն նաեւ զիտէր զաղտնի ծառայողութիւններուն տկարութիւնները եւ չ'ուզեր պաղեստինեան յարձակումներուն դէմ դնելու ձախողութեան պատաստի ունենալով Իսրայէլի ապահովական ուժերուն անոնք պիտի ակնկալեն, որ Իսրայէլ շուտով պիտի յարձակի եւ քանդէ այդ ենթակառոյցները: Ասիկա պաղեստինցիները կը դնէ «գործածէ՛ գայն կամ կորսնցուցու» իրավիճակին մէջ: Պաղեստինցիներու շահերուն կը համընկնի, որ յանկարծակի յարձակումներու ալիք մը յառաջանան, քան թէ խնայողութեամբ օգտագործեն իրենց միջոցները:

ներուն եւ թէ Շարունի դեկալարած ընդդիմութեան: Այս պահուն Արաֆաթ Պարաքի վրայ գրաւելի դնելու:

Անցեալ շաբաթներուն Արաֆաթ Մոսկուայի եւ Գահրէի մէջ փորձեց Այսրըրդանանի եւ կազայի մէջ ՄԱԿի խաղաղապահ ուժերու հաստատման ուղղութեամբ լուսաբանական կատարել: Ասիկա առաջին քայլն է այս շրջանները Իսրայէլի հակադիմադրական դուրս բերելու համար: Արաֆաթ չ'ակնկալէր, որ Իսրայէլ չ'աւանդուէր իր իրաւունքները, սակայն այդ մերժումը կրնայ առաւել մեկուսացնել Պարաքի կառավարութիւնը:

Եզիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաք առանցքային դերակատարութիւն ունի զէպերու զարգացման մէջ: Իսրայէլի նկատմամբ անոր քաղաքականութեան փոփոխութիւնը կրնայ վերասահմանել շրջանի աշխարհաքաղաքական կարգաւիճակը: Յարդն միայն տուն կանչած է իր դեսպանը՝ մինչեւ զինադուլի հաստատումը, մերժած է Մ. Նահանգներու դէմ քարտուղի ամպարկոյի կոչներուն ընդառաջելու եւ կը հակառակի փոփոխութիւն մտայնել Եզիպտոսի կեցածքին մէջ: Պաղեստինցիները կը յուսան, որ դիւանապետական յարաբերութիւնները կ'առօրէն իրենց հետ իսրայէլ-Եզիպտոս խաղաղութեան դաշինքը:

Իսրայէլացիները ծուղակի մէջ ինկած են: Մինչ անոնք պաղեստինցիներուն ապստամբութիւնը պիտի ճնշեն, սակայն իրենց քայլերը կը սաստկացնեն Մուսարաքի եւ արար այլ ղեկավարներուն վրայ ճնշումները: Մուսարաքի վրայ ճնշումի բարձրացումով կը բարձրանայ նաեւ Մ. Նահանգներու վրայ ճնշումը: Իսրայէլ աւելի կը մեկուսացուի: Ասիկա առիթ կը հանդիսանայ պաղեստինցիներուն համար, որ լուրջ քաղաքական զինուորական գործողութեան դիմէ, Շարուն կրնայ միջոցառել իր բոլոր խաղաղարար:

Թէեւ շատ կանուխ է լուսնալու, թէ քաղաքական իրավիճակը ինչպէս պիտի զարգանայ, սակայն Մուսարաքի եւ Շարունի պէտք է մտնել հետեւի իր բոլոր ղեկավարի զէպերը զէպերու յաջորդ փուլին համար:

Պաղեստինցիները ներկայիս նուազէն միջին ուժեղացնումներ կ'ունենան մտած են Իսրայէլեան ուժերուն հետ: Իսրայէլ վստահ չէ, թէ ասիկա գեր-լինթրոֆատ մըն է, այլ Լիբանան մը, թէ պարզապէս անցողակի միջադէպ մը: Իսրայէլի շփոթը կ'արտայայտուի իր վերջին պատասխաններուն ընդմէջէն: Երկու կողմերը կը զիտակցին, որ Եսաէք

Արաֆաթի նպատակն է արարական աշխարհը, մասնաւորաբար Եզիպտոսը, համախմբել հակա-Իսրայէլական ճակատի մէջ: Ասիկա կը նպատակաւորէ երկու բան. նախ՝ անիկա կը նպատակէ իրեն՝ Արաֆաթին, ապա՝ այն վարկածին, թէ Միացեալ Նահանգներ ստիպուած պիտի ըլլան զսպել Իսրայէլը:

Իսրայէլի վարչապետ էհուտ Պարաք, որ ներքին

ԵՄԷՆ «ՔՈԼ» ԽՈՐՏԸՆԿԵՑԻ ՊԱՅԹՈՒՄԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴՆԷ ԵՐԿՈՒ ՍԷՌՈՒՏՅԻՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Ամերիկեան «Քոլ» խորտընկէցի պայթումին քննութիւնները յայտնաբերած են, որ պայթումին պատասխանատուները եմէնական արժատներ ունեցող երկու սէրուցիներ են, որոնք Աֆղանիստանի մէջ կուռած են Խորհրդային ուժերուն դէմ, ըստ Եմէնի վարչապետին: Երկու սէրուցիներուն մասին հաւաքուած տեղեկութիւնները այնքան մօտ են էֆ. Պի. Այ. ի կողմէ հետապնդող Ուսամա Պըն Լատէնին, որ եմէնցի քննիչները եզրակացուցած են, թէ Պըն Լատէնը գործակալ եմէնական արժատներ ունեցող սէրուցի մը, նուազագոյնը անուղղակի կապ ունեցած պէտք է ըլլայ պայթումին հետ: Սակայն ցարդ ոչ մէկ փաստ կայ այս գծով:

Եմէնցի պաշտօնատարը՝ Ապտիւլբարիւմ Իրեանի յայտնեց, թէ այն խումար մը եմէնցիները, որոնք օպնած էին 12 Հոկտեմբերի գործողութեան գործողութեան, ամէնէն ուշը Յունուարին դատարարութեան պիտի ենթարկուին Ատէնի մէջ, որուն ջոկերուն մէջ տեղի ունեցաւ պայթումը: Ան նաեւ ըսաւ, որ կասկածելիներուն մեծ մասը այսպէս կոչուած «արար աֆղաններ» են, միջին արեւելեան կառավարութիւններուն կողմէ օգտագործուած եզր մը՝ նկարագրելու համար 1980-ին Աֆղանիստանի դրկուած արար կուռողները: Հազարաւոր գինեակներ ապա փոխադրուեցան Եմէն, ուր անոնք կազմեցին ահաբեկական խումբեր եւ ամերիկեան թիրախներ հարուածեցին: Երբ Եմէն ձեռնարկէ կասկածելիներու դատարարութեան, ան բախում պիտի ունենայ էֆ. Պի. Այ. ին հետ, որ կ'ուզէ բարձր մակարդակներու քննութիւն կատարել Եմէնի մէջ, նախքան դատարարութիւններու սկսիլը: Եմէնցի պաշտօնատարներ յայտնած են էֆ. Պի.

Այ. ին, թէ իրենց քննութիւնները ցոյց կու տան, որ ըմբռնարուներ մէջ պաշտօնական Եմէնի դերակատարութիւնը սահմանափակուած է Ատէնի մէջ եւ այլուր կառավարական ցած մակարդակի պաշտօններ ունեցող վեց «արար աֆղաններով, որոնք կեղծ անցագրերով, փոխադրամիջոց, բանակին կողմէ գործածուող պայթուցիկներ եւ երեք ապստանարաններ հայթայթած են իսպանարարներուն: «Քոլ»ի պայթումին յաջորդող վեց շաբաթներուն ընթացքին էֆ. Պի. Այ. լուրջ մրցակցութեան մէջ էր եմէնցիներուն հետ, որոնք խիստ պայմաններ դրած էին «Քոլ»ի գծով անոնց վարած քննութիւններուն նկատմամբ: Միայն քանի մը շաբաթ առաջ էր, որ Իրեանի յայտարարեց, որ իրենց քաղաքականութիւնը մասամբ փոխուած է, եւ որ պատրաստ են աւելի լայն իրաւասութիւններ տալու էֆ. Պի. Այ. ին: Սակայն տակաւին էֆ. Պի. Այ. ին արգիլուած է վիզաներու եւ կասկածելիներու անուններ տալը կամ անոնց հարցաքննելը: Անոնք թելադրանքներ ստացած են եմէնցիներէն, որ իրենց քննութիւններուն մէջ պէտք է ձեռնարկուած պաշտօնեաներէն շատ վեր բարձրանան եւ հասնին մայրաքաղաք Սանաայի բարձրագոյն պաշտօնատարներուն, որոնք անցեալին սերտ կապեր ունեցած են Պըն Լատէնի հետ: Եմէնցի ալ պաշտօնատարներուն համաձայն, պայթումին կասկածելի պատասխանատուներուն ազգականներուն արեան քննութիւնները կը նպատակաւորեն փաստել էֆ. Պի. Այ. ին այն վարածը, որ 12 Հոկտեմբերի պայթումը կապ ունի երկու ամերիկեան դեսպանատուներուն պայթումներուն հետ, որոնք զոհ գացին 300 հոգի, ներառեալ՝ 12 ամերիկացիներ: Պըն Լատէն, որ վերջին տարիներուն Աֆղանիստան ապստանած է, ղեկավարութեան պայթումներուն համար յանցաւոր գտնուած է Մանհեթենի զաշնակցային զիտուող պատասխաններուն կողմէ, եւ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը 5 միլիոն տոլարի պարգեւ մը կը խոստանայ զայն յանձնողին: Եմէնցի պաշտօնատարներուն համաձայն, եմէնցի կասկածելիներուն ազգականներէն անոնք են նախկին պայթումներու վարիչներ հաւաքուած մարդկային մնացորդներուն «Տի. Էն. Էյ.»ները պիտի բաղդատուին եւ եզրակացութիւն մը պիտի հանուի: Եֆ. Պի. Այ. ի պաշտօնատարներ յայտնեցին, թէ կրցած են նաեւ մարդկային մնացորդներ հաւաքել «Քոլ»ի վրայէն եւ կը հաւատան, որ այդ մնացորդները կը պատկանին այն երկու ահաբեկիչներուն, որոնք ռուսները կը զոհ չ'առնէին մօտեցած էին մարտանաւուն: Իրեանիի համաձայն, Եմէնի իշխանութիւնները ոչ մէկ փաստ ունին, որ Պըն Լատէն որեւէ կապ ունեցած է «Քոլ»ի պայթումին հետ: Սակայն ան նշեց, որ Պըն Լատէնի ընտանիքը արեւելեան Եմէնի Հատհարամութիւնահանգէն դէպի Միւսուական Արաբիա գաղթած էր 1950-ականներուն:

ՌԻԱՏԻ ՄԷՋ ԻՆՔՆԱՇԱՐԻՍ ԳՐԱԹՈՒՄ ՄԸ ԿԸ ՎԻՐԱԽՈՐԷ 3 ԱՆՔԼԻԱՅԻՆԵՐ

Չորեքշաբթի, 22 Նոյեմբերին, երեք անգլիացիներ վիրաւորուեցան Ռիատի մէջ ինքնաշարժի պայթումի մը հետեւանքով, որ հինգ օրուան ընթացքին երկրորդ խափանարարական արարքն էր Սէուտական Արաբիոյ մայրաքաղաքին մէջ:

Յարդ ոչ ոք ստանձնած է այդ արարքներուն պատասխանատուութիւնը: Սակայն սէուտցի պաշտօնատարներուն համաձայն, անոնք աւելի անձնական բնոյթ ունին, քան քաղաքական, հակառակ Իսրայէլ - Պաղեստին տագնապին պատճառով շրջանին մէջ գոյութիւն ունեցող յարուածութեան:

Ուրբաթ, 17 Նոյեմբերին, դարձեալ ինքնաշարժի պայթումի մը հետեւանքով սպանուեցաւ անգլիացի երկրաշարժ-Քրիստֆֆր Ռոտուէյ, իսկ անոր կինը վիրաւորուեցաւ: Իսկ դրացի Եմէնի մէջ ռուս մը պետեղում էր բրիտանական դեսպանատան մէջ 13 Նոյեմբերին, «Քոլ» խորտընկէցի դէպքին յաջորդ օրը: Բրիտանական դեսպանատան պաշտօնատար մը յայտարարեց, թէ վերջին խափանարարութեան պոռթկումը երկու տղամարդ էր մէկ կին, թեթեօրէն վիրաւորուած էին, սակայն ան չ'արարքին ետին գտնուող հաւանական դրոպապատճառներուն մասին, այլ բաւարարուեցաւ՝ ըսելով, որ դեսպանատունը կը գործակցի սէու-

տական իշխանութիւններուն հետ պայթումի քննութիւններուն գծով:

Բրիտանիոյ մէջ ինքզինք բացայայտել չուզող աղբիւր մը մատնանշած է, թէ պոռթկումը կը պաշտօնավարէին «Ալ Սալամ Էր-քրաֆթ» ընկերութեան մէջ, որուն 50 տոկոսը կը պատկանէր ամերիկեան «Պոլիսկ» օդանաւային ընկերութեան:

Սէուտական Արաբիոյ մէջ «Օքապ» օրաթերթը գրեց, թէ ինքնաշարժը կը յառաջանար Ռիատի մէջ Ապտիւլ Ալիյ Քալաւտի անունի պողոտայէն, երբ յանկարծ կը պայթի: Տեղական ուրիշ օրաթերթ մը՝ «Ալ Իքթիսատիա» նկարած էր պայթած ինքնաշարժը:

«Օքապ» մէջբերեց Սէուտական Արաբիոյ ներքին գործոց նախարարի տեղակալ Ահմէտ Պըն Ապտիւլ Ալիյ իշխանը, որ ըսած էր, թէ վիրաւորներէն մէկը հիւանդանոցն է դարմանումի համար, իսկ միւս տղամարդն ու կինը արդէն դարմանուած են դուրս եկած են հիւանդանոցէն: Ան նշած էր նաեւ, որ ինք չ'անտեսէր արարքին ետին անձնական պատճառներ գտնելու կարելիութիւնը: «Ապտիւլական մարմինները սկսած են իրենց քննութիւններուն եւ կը ջանան հետապնդել դէպքին մասնաւորութիւնները եւ յայտնաբերել որեւէ կապ ստոր եւ նախկին դէպքերուն միջեւ», նշեց նախարարի տեղակալը:



Սէուտական ապահովական ուժերը Ապտիւլ Ալիյ Քալաւտի անունի պողոտայէն կը վերցնեն պայթած ինքնաշարժը:

«ԱԶԳԱԿ»Ի ՀՆՈՒԱԶԱՅՆԻ ԹԻՒՆԵՐԸ
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնէ հետեւին թիւերը: 258526, 260115 եւ 241274:
«ՍՈՐԸՄՅՈՐ»

